**Երկրորդ ընթերցում**

**Լրամշակված նախագիծ**

**Կ-519-27.02.2023-ՏՀ-011**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածում՝

1) վերնագրում «իրավունքների» բառից հետո լրացնել «և սահմանափակումների» բառերը.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման համար անհրաժեշտ իրավահաստատող փաստաթղթերը, ինչպես նաև հողը Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողերի ցանկում լինելու կամ չլինելու մասին տեղեկանքը, հողի և շինության նպատակային կամ գործառնական նշանակությունը (գյուղատնտեսական հողերի դեպքում՝ հողատեսքը) սահմանելու կամ փոփոխելու վերաբերյալ որոշումները անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացնում են, իսկ պետական գրանցման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերը կարող են ներկայացնել դրանք

կազմած, հաստատած կամ վավերացրած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, նոտարները:».

3) լրացնել 2.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա սույն հոդվածի 2-րդ մասում նշված մարմինները և նոտարները սույն հոդվածի 2-րդ մասում նշված պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնում են էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները և ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

**Հոդված 2.** Օրենքի 16-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասի

1) 6-րդ կետի առաջին նախադասությունում «հրամանով» բառից հետո լրացնել «, որը ենթակա է անհապաղ կատարման և հրամանի բողոքարկումը չի կասեցնում հրամանի գործողությունը կամ կատարումը» բառերը

2) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) լիազոր մարմինը վկայական ստացած անձանց կապի միջոցները և աշխատանքի վայրը վերջիններիս համաձայնությամբ, իսկ անվանացանկը հրապարակում է իր պաշտոնական կայքում:»:

2. 4-րդ մասում «Սույն հոդվածի 1-ին մասում նշված» բառերը փոխարինել «Քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության» բառերով.

**Հոդված 3.** Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կադաստրային գործի փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացնելու կամ կազմելու դեպքում դրանք պահվում են թղթային և էլեկտրոնային եղանակով վարվող կադաստրային գործերում, իսկ էլեկտրոնային տարբերակով

ներկայացնելու կամ կազմելու դեպքում՝ միայն էլեկտրոնային եղանակով վարվող կադաստրային գործում:

3. Կադաստրային գործի փաստաթղթերը պահվում են անժամկետ՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:»:

**Հոդված 4.** Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «դիմումը» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի» բառերը.

2) 2-րդ մասի 8-րդ կետում «համարը» բառից հետո լրացնել «կամ հարկ վճարողի հաշվառման համարը» բառերը.

3) 3-րդ մասի 1-ին կետում «այլ փաստաթղթեր:» բառերը փոխարինել «այլ փաստաթղթեր. ընդ որում՝ սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 2.1-ին մասերում սահմանված դեպքերում դիմումի հետ ներկայացվում է համապատասխան փաստաթղթերը նույնականացնող տվյալները.» բառերը:

4) 6-րդ մասի առաջին նախադասությունում «ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն» բառերը փոխարինել «ծագող իրավունքների պետական գրանցման դիմումները պետք է ներկայացվեն» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Բացառությամբ սույն օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագրերից ծագող իրավունքների (սահմանափակումների) պետական գրանցման դեպքերի, պետական գրանցման դիմումը և սույն օրենքով դիմումին կից ներկայացման ենթակա փաստաթղթերը կարող են, իսկ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և իրավաբանական անձանց կողմից պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով, որի դեպքում դիմողի նույնականացումը

կատարվում է դիմողի էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ Կառավարության կողմից սահմանված անձի նույնականացման այլ եղանակով:»:

**Հոդված 6.** Օրենքի 32-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Գրավոր դիմումը կարող է ներկայացվել ցանկացած սպասարկման գրասենյակ՝ անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից: Տեղեկատվության տրամադրման դիմումը, բացառությամբ սույն հոդվածի 3.5-րդ մասի, կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով:»:

2) լրացնել 3.5-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«3.5 Տեղական ինքնակառավարման մարմինները և իրավաբանական անձինք, իսկ ֆիզիկական անձինք սույն օրենքի 11-րդ հոդվածի հիմքերով սահմանափակված մատչելիությամբ տեղեկություն չպարունակող և վճարովի հիմունքներով տրամադրվող տեղեկությունների վերաբերյալ դիմումները ներկայացնում են բացառապես էլեկտրոնային եղանակով՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով:»:

**Հոդված 7.** Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասում «սպասարկման գրասենյակ» բառերը հանել:

**Հոդված 8.** Օրենքի 37-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«3. Մինչև 2006 թվականի հուլիսի 29-ը բնակելի, խառը կառուցապատման կամ տնամերձ հողամասում սեփականության իրավունքով օրինական գրանցված 50 և ավելի տոկոս ավարտվածության աստիճան ունեցող կիսակառույց անհատական բնակելի տունը, դրա օժանդակ և տնտեսական շինությունները, որպես ավարտված

շինություն, գրանցվում է որակավորված անձի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված և ներկայացված չափագրման նյութերի փաթեթի հիման վրա:»:

**Հոդված 9.** Օրենքի 47.1-ին հոդվածում՝

1) 2-րդ մասում «հոդվածում» բառը փոխարինել «հոդվածի 1-ին մասում» բառերով.

2) 3-րդ և 4-րդ մասերում «հոդվածով» բառերը փոխարինել «հոդվածի 1-ին մասով» բառերով.

3) լրացնել 5-12-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«5. Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման միջպետական, հանրապետական կամ մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների (ներառյալ տրանսպորտային հանգույցների) և դրանց օտարման շերտերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցումները կարող են իրականացվել նաև անշարժ գույքի պետական ռեգիստրի նախաձեռնությամբ՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի կողմից կազմված և Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների տնօրինման մասով լիազոր պետական ճանապարհային մարմնի ու համապատասխան համայնքի հետ համաձայնեցված ավտոմոբիլային ճանապարհների և դրանց օտարման շերտերի հատակագծերի հիման վրա:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ավտոմոբիլային ճանապարհների և դրանց օտարման շերտերի հատակագծերի նախագծերի կազմման համար հիմք են ընդունվում անշարժ գույքի պետական ռեգիստրի կողմից ստեղծված կամ կազմված օրթոֆոտոհատակագծերը (օրթոլուսանկարները):

7. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված հատակագծերը պետք է համաձայնեցվեն միայն էլեկտրոնային եղանակով՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով:

8. Անշարժ գույքի պետական ռեգիստրը սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ավտոմոբիլային ճանապարհների և դրանց օտարման շերտերի հատակագծերի նախագիծը (այսուհետ՝ ավտոմոբիլային ճանապարհի նախագիծ)՝ համադրված օրթոֆոտոհատակագծերով (օրթոլուսանկարով), էլեկտրոնային տարբերակներով (Փի Դի Էֆ (PDF) ֆորմատի նիշքերով) տրամադրվում է Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների տնօրինման մասով լիազոր պետական ճանապարհային մարմնին ու համապատասխան համայնքին, տեղադրվում ավտոմոբիլային ճանապարհի նախագիծը նաև անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային ծառայությունների մատուցման e-cadastre.am կայքի հատուկ բաժնում: Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների տնօրինման մասով լիազոր պետական ճանապարհային մարմինը և համայնքի ղեկավարը սույն մասում նշված փաստաթղթերը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում անշարժ գույքի պետական ռեգիստր է ներկայացնում գրավոր համաձայնություն կամ առարկություն՝ առարկության դեպքում տալով նաև առաջարկություն: Չհամաձայնեցված հատվածների համար անշարժ գույքի պետական ռեգիստրի կողմից կազմվում է ավտոմոբիլային ճանապարհի նոր նախագիծ և կրկին ներկայացվում համաձայնեցման:

9. Ավտոմոբիլային ճանապարհի նախագծի վերաբերյալ սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետում գրավոր համաձայնություն կամ առաջարկություն չներկայացվելու դեպքում նախագիծը համարվում է համաձայնեցված:

10. Անշարժ գույքի պետական ռեգիստրը համաձայնեցված ավտոմոբիլային ճանապարհի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում

միջոցներ է ձեռնարկում համապատասխան ավտոմոբիլային ճանապարհի և դրա օտարման շերտի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցման ուղղությամբ:

11. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված գույքերի պետական գրանցման վրա չեն տարածվում սույն օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնները, ինչպես նաև սույն օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2.1-ին կետերով նախատեսված պահանջները:

12. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված գույքերի պետական գրանցման դեպքում որպես գույքի հասցե նշվում է ավտոմոբիլային ճանապարհի պայմանանիշը, պայմանանիշի համարը, և ավտոճանապարհի անվանումը:»:

**Հոդված 10.**

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից բացառությամբ՝ 1-ին և 4-րդ հոդվածների:

2) Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված Կառավարության որոշումը ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում:

3) Սույն օրենքի 1-ին և 4-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 2-րդ կետում սահմանված Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահին և տարածվում են Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման իրավահարաբերությունների վրա:

4) Անշարժ գույքի պետական ռեգիստրը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից, նույն որոշմամբ սահմանված կարգով, եռամսյա ժամկետում իր պաշտոնական ինտերնետային կայքի առանձնացված բաժնում տեղադրում է մինչև Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելը կիրառված և գործող

սահմանափակումների վերաբերյալ իր էլեկտրոնային տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության ցանկը (այսուհետ՝ Ցանկ):

5) Անշարժ գույքի պետական ռեգիստրը, սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով ապահովում է Ցանկի համընդհանուր հասանելիությունը՝ որոնման և դիտման հնարավորությամբ, իսկ սահմանափակում կիրառելու և դրանք դադարեցնելու լիազորություն ունեցող մարմիններին, բացառությամբ դատարանների, նրանց իրավասությունների սահմաններում գտնվող սահմանափակումների խմբագրման հնարավորությամբ:

6) Սահմանափակում կիրառելու և դրանք դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինները, բացառությամբ դատարանների, իրենց իրավասության սահմաններում, Ցանկը հրապարակվելուց հետո, սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով, երկու տարվա ընթացքում խմբագրում են Ցանկը՝ լրացնելով այն սահմանափակումները, որոնք առկա չեն Ցանկում, սակայն առկա է այն կիրառելու հիմքը և հանելով այն սահմանափակումները, որոնք օրենսդրությամբ սահմանված հիմքերով ենթակա չեն պահպանման: Սահմանափակում կիրառելու և դրանք դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինները սահմանափակումը կիրառելու կամ վերացնելու վերաբերյալ որոշումը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով ներկայացնում են անշարժ գույքի պետական ռեգիստր:

7) Սահմանափակում կիրառելու և դրանք դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինները, սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով, յուրաքանչյուր եռամսյակ իրենց կատարած աշխատանքների և խմբագրումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն են ներկայացնում անշարժ գույքի պետական ռեգիստրին, որն իրականացնում է ստացված տեղեկատվության հաշվառում՝ դրանում ներառելով

նաև իր կատարած աշխատանքների և խմբագրումների վերաբերյալ եռամսյակային տեղեկատվությունը:

8) Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում սահմանված երկու տարվա ժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը անշարժ գույքի պետական ռեգիստրը, սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով արգելափակում է Ցանկի խմբագրման հնարավորությունը:

9) Ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված ժամկետը լրանալու օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում Ցանկի խմբագրման վերաբերյալ իրենց դիմում-բողոքները ներկայացնում են սահմանափակում կիրառելու և դրանք դադարեցնելու լիազորություն ունեցող մարմիններ, որոնք Ցանկում գույքի տնօրինման, օգտագործման կամ տիրապետման իրավազորությունների նկատմամբ սահմանափակումներ լրացնելու վերաբերյալ դիմում-բողոքների մասին, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով հաղորդում են անշարժ գույքի պետական ռեգիստրին:

10) Սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում նշված հաղորդման հիման վրա անշարժ գույքի պետական ռեգիստրը օրենքի ուժով գրանցում է գույքի տնօրինման, օգտագործման կամ տիրապետման իրավազորությունների սահմանափակում, որն իր իրավաբանական ուժը պահպանում է երկու ամիս, եթե մինչև տվյալ ժամկետի լրանալը սահմանափակում կիրառելու կամ դրանք դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինը չի ներկայացրել սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում նշված դիմում-բողոքների քննարկման արդյունքում կայացված սահմանափակումը դադարեցնելու կամ սահմանափակում կիրառելու մասին որոշում:

11) Սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում նշված դիմում-բողոքները քննարկվում և լուծվում են օրենսդրությամբ սահմանված կարգով երկամսյա ժամկետում: Դիմում-բողոքների լուծման արդյունքում կազմված սահմանափակումը դադարեցնելու կամ սահմանափակում կիրառելու մասին որոշումը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով ներկայացվում են անշարժ գույքի պետական ռեգիստր:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~*Առաջին*~~Երկրորդ ընթերցում

Լրամշակված Նախագիծ

*Կ-519-27.02.2023-ՏՀ-011/1*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածում՝

1~~.~~) վերնագրում «իրավունքների» բառից հետո լրացնել «~~եւ~~և սահմանափակումների» բառերը.

2~~.~~) 2-րդ մասը շարադրել ~~հետեւյալ~~հետևյալ խմբագրությամբ.

«2. Եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա գույքի նկատմամբ իրավունքների ~~եւ~~և սահմանափակումների պետական գրանցման համար անհրաժեշտ իրավահաստատող փաստաթղթերը, ինչպես ~~նաեւ~~նաև հողը Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ քաղաքացիներին ~~եւ~~և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողերի ցանկում լինելու կամ չլինելու մասին տեղեկանքը, հողի ~~եւ~~և շինության նպատակային կամ գործառնական նշանակությունը (գյուղատնտեսական հողերի դեպքում՝ հողատեսքը) սահմանելու կամ փոփոխելու

վերաբերյալ որոշումները անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացնում են, իսկ պետական գրանցման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերը կարող են ներկայացնել դրանք կազմած, հաստատած կամ վավերացրած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, նոտարները:».

3~~.~~) լրացնել 2.1-ին մաս ~~հետեւյալ~~հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա սույն հոդվածի 2-րդ մասում նշված մարմինները ~~եւ~~և նոտարները սույն հոդվածի 2-րդ մասում նշված պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնում են էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները ~~եւ~~և ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

**Հոդված 2.** Օրենքի 16-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասի

1) 6-րդ կետի առաջին նախադասությունում «հրամանով» բառից հետո լրացնել «, որը ենթակա է անհապաղ կատարման ~~եւ~~և հրամանի բողոքարկումը չի կասեցնում հրամանի գործողությունը կամ կատարումը» բառերը

2) 8-րդ կետը շարադրել ~~հետեւյալ~~հետևյալ խմբագրությամբ.

«8) լիազոր մարմինը վկայական ստացած անձանց կապի միջոցները ~~եւ~~և աշխատանքի վայրը վերջիններիս համաձայնությամբ, իսկ անվանացանկը հրապարակում է իր պաշտոնական կայքում:»:

2. 4-րդ մասում «Սույն հոդվածի 1-ին մասում նշված» բառերը փոխարինել «Քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) ~~եւ~~և հողաշինարարության» բառերով.

**Հոդված 3.** Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ ~~եւ~~և 3-րդ մասերը շարադրել ~~հետեւյալ~~հետևյալ խմբագրությամբ.

«2. Կադաստրային գործի փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացնելու կամ կազմելու դեպքում դրանք պահվում են թղթային ~~եւ~~և էլեկտրոնային եղանակով վարվող կադաստրային գործերում, իսկ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու կամ կազմելու դեպքում՝ միայն էլեկտրոնային եղանակով վարվող կադաստրային գործում:

3. Կադաստրային գործի փաստաթղթերը պահվում են անժամկետ՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:»:

**Հոդված 4.** Օրենքի 24-րդ հոդվածում՝

1~~.~~) 1-ին մասում «դիմումը» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի» բառերը.

2~~.~~) 2-րդ մասի 8-րդ կետում «համարը» բառից հետո լրացնել «կամ հարկ վճարողի հաշվառման համարը» բառերը.

3~~.~~) 3-րդ մասի 1-ին կետում «այլ փաստաթղթեր:» բառերը փոխարինել «այլ փաստաթղթեր. ընդ որում՝ սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ ~~եւ~~և 2.1-ին մասերում սահմանված դեպքերում դիմումի հետ ներկայացվում է համապատասխան փաստաթղթերը նույնականացնող տվյալները.» բառերը:

4~~.~~) 6-րդ մասի առաջին նախադասությունում «ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն» բառերը փոխարինել «ծագող իրավունքների պետական գրանցման դիմումները պետք է ներկայացվեն» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել ~~հետեւյալ~~հետևյալ խմբագրությամբ.

«1. Բացառությամբ սույն օրենքի 48-րդ ~~հոդվածով~~հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագրերից ծագող իրավունքների (սահմանափակումների) պետական գրանցման դեպքերի, պետական գրանցման դիմումը ~~եւ~~և սույն օրենքով դիմումին կից ներկայացման ենթակա փաստաթղթերը կարող են, իսկ պետական կամ

տեղական ինքնակառավարման մարմինների ~~եւ~~և իրավաբանական անձանց կողմից պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով, որի դեպքում դիմողի նույնականացումը կատարվում է դիմողի էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ Կառավարության կողմից սահմանված անձի նույնականացման այլ եղանակով:»:

**Հոդված 6.**~~-~~ Օրենքի 32-րդ հոդվածում՝

1~~.~~) 3-րդ մասը շարադրել ~~հետեւյալ~~հետևյալ խմբագրությամբ.

«3. Գրավոր դիմումը կարող է ներկայացվել ցանկացած սպասարկման գրասենյակ՝ անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից: Տեղեկատվության տրամադրման դիմումը, բացառությամբ սույն հոդվածի 3.5-րդ մասի~~ 1-ին կետի~~, կարող է ներկայացվել ~~նաեւ~~նաև էլեկտրոնային եղանակով՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով~~:~~:»:

~~1)~~ 2) լրացնել 3.5-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«3.5 Տեղական ինքնակառավարման մարմինները ~~եւ~~և իրավաբանական անձինք, իսկ ֆիզիկական անձինք սույն օրենքի 11-րդ հոդվածի հիմքերով սահմանափակված մատչելիությամբ տեղեկություն չպարունակող ~~եւ~~և վճարովի հիմունքներով տրամադրվող տեղեկությունների վերաբերյալ դիմումները ներկայացնում են բացառապես էլեկտրոնային եղանակով՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով:»:

**Հոդված 7.**~~-~~ Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասում «սպասարկման գրասենյակ» բառերը հանել:

**Հոդված 8.**~~-~~ Օրենքի 37-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով ~~հետեւյալ~~հետևյալ բովանդակությամբ.

«3. ~~Մինչև~~Մինչև 2006 թվականի հուլիսի 29-ը բնակելի, խառը կառուցապատման կամ տնամերձ հողամասում սեփականության իրավունքով օրինական գրանցված 50 ~~և~~և ավելի տոկոս ավարտվածության աստիճան ունեցող կիսակառույց անհատական բնակելի տունը, դրա օժանդակ ~~և~~և տնտեսական շինությունները, որպես ավարտված շինություն, գրանցվում է որակավորված անձի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված ~~և~~և ներկայացված չափագրման նյութերի փաթեթի հիման վրա:»:

**Հոդված 9.**~~-~~ Օրենքի 47.1-ին հոդվածում՝

1~~.~~) 2-րդ մասում «հոդվածում» բառը փոխարինել «հոդվածի 1-ին մասում» բառերով.

2~~.~~) 3-րդ ~~և~~և 4-րդ մասերում «հոդվածով» բառերը փոխարինել «հոդվածի 1-ին մասով» բառերով.

3~~.~~) լրացնել 5-12-րդ մասեր ~~հետևյալ~~հետևյալ բովանդակությամբ.

«5. Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման միջպետական, հանրապետական կամ մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների (ներառյալ տրանսպորտային հանգույցների) ~~և~~և դրանց օտարման շերտերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցումները կարող են իրականացվել ~~նաև~~նաև անշարժ գույքի պետական ռեգիստրի նախաձեռնությամբ՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի կողմից կազմված ~~և~~և Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների տնօրինման մասով լիազոր պետական ճանապարհային մարմնի ու համապատասխան համայնքի հետ համաձայնեցված ավտոմոբիլային ճանապարհների ~~և~~և դրանց օտարման շերտերի հատակագծերի հիման վրա:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ավտոմոբիլային ճանապարհների ~~եւ~~և դրանց օտարման շերտերի հատակագծերի նախագծերի կազմման համար հիմք են ընդունվում անշարժ գույքի պետական ռեգիստրի կողմից ստեղծված կամ կազմված օրթոֆոտոհատակագծերը (օրթոլուսանկարները):

7. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված հատակագծերը պետք է համաձայնեցվեն միայն էլեկտրոնային եղանակով՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով:

8. Անշարժ գույքի պետական ռեգիստրը սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ավտոմոբիլային ճանապարհների ~~եւ~~և դրանց օտարման շերտերի հատակագծերի նախագիծը (այսուհետ՝ ավտոմոբիլային ճանապարհի նախագիծ)՝ համադրված օրթոֆոտոհատակագծերով (օրթոլուսանկարով), էլեկտրոնային տարբերակներով (Փի Դի Էֆ (PDF) ֆորմատի նիշքերով) տրամադրվում է Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների տնօրինման մասով լիազոր պետական ճանապարհային մարմնին ու համապատասխան համայնքին, տեղադրվում ավտոմոբիլային ճանապարհի նախագիծը ~~նաեւ~~նաև անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային ծառայությունների մատուցման e-cadastre.am կայքի հատուկ բաժնում: Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների տնօրինման մասով լիազոր պետական ճանապարհային մարմինը ~~եւ~~և համայնքի ղեկավարը սույն մասում նշված փաստաթղթերը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում անշարժ գույքի պետական ռեգիստր է ներկայացնում գրավոր համաձայնություն կամ առարկություն՝ առարկության դեպքում տալով ~~նաեւ~~նաև առաջարկություն~~:~~: Չհամաձայնեցված հատվածների համար անշարժ գույքի պետական ռեգիստրի կողմից կազմվում է ավտոմոբիլային ճանապարհի նոր նախագիծ ~~եւ~~և կրկին ներկայացվում համաձայնեցման~~:~~:

~~8~~ 9. Ավտոմոբիլային ճանապարհի նախագծի վերաբերյալ սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետում գրավոր համաձայնություն կամ առաջարկություն չներկայացվելու դեպքում նախագիծը համարվում է համաձայնեցված:

10. Անշարժ գույքի պետական ռեգիստրը համաձայնեցված ավտոմոբիլային ճանապարհի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում միջոցներ է ձեռնարկում համապատասխան ավտոմոբիլային ճանապարհի ~~եւ~~և դրա օտարման շերտի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցման ուղղությամբ:

11. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված գույքերի պետական գրանցման վրա չեն տարածվում սույն օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնները, ինչպես ~~նաեւ~~նաև սույն օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ~~եւ~~և 2.1-ին կետերով նախատեսված պահանջները:

12. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված գույքերի պետական գրանցման դեպքում որպես գույքի հասցե նշվում է ավտոմոբիլային ճանապարհի պայմանանիշը, պայմանանիշի համարը, ~~եւ~~և ավտոճանապարհի անվանումը:»:

**Հոդված 10.** ~~Անցումային դրույթներ~~

1~~.~~) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից բացառությամբ՝ 1-ին ~~եւ~~և 4-րդ հոդվածների:

2~~.~~) Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ ~~մասում~~կետում սահմանված Կառավարության որոշումը ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ~~1~~մեկ տարվա ընթացքում:

3~~.~~) Սույն օրենքի 1-ին ~~եւ~~և 4-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 2-րդ ~~մասում~~կետում սահմանված Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահին ~~եւ~~և տարածվում են Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից սույն օրենքի

1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ ~~մասով~~կետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման իրավահարաբերությունների վրա:

4~~.~~) Անշարժ գույքի պետական ռեգիստրը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ ~~մասում~~կետում սահմանված Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից, նույն որոշմամբ սահմանված կարգով, եռամսյա ժամկետում իր պաշտոնական ինտերնետային կայքի առանձնացված բաժնում տեղադրում է ~~մինչեւ~~մինչև Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելը կիրառված ~~եւ~~և գործող սահմանափակումների վերաբերյալ իր էլեկտրոնային տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության ցանկը (այսուհետ՝ Ցանկ):

5~~.~~) Անշարժ գույքի պետական ռեգիստրը, սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով ապահովում է Ցանկի համընդհանուր հասանելիությունը՝ որոնման ~~եւ~~և դիտման հնարավորությամբ, իսկ սահմանափակում կիրառելու ~~եւ~~և դրանք դադարեցնելու լիազորություն ունեցող մարմիններին, բացառությամբ դատարանների, նրանց իրավասությունների սահմաններում գտնվող սահմանափակումների խմբագրման հնարավորությամբ:

6~~.~~) Սահմանափակում կիրառելու ~~եւ~~և դրանք դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինները, բացառությամբ դատարանների, իրենց իրավասության սահմաններում, Ցանկը հրապարակվելուց հետո, սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով, երկու տարվա ընթացքում խմբագրում են Ցանկը՝ լրացնելով այն սահմանափակումները, որոնք առկա չեն Ցանկում, սակայն առկա է այն կիրառելու հիմքը ~~եւ~~և հանելով այն սահմանափակումները, որոնք օրենսդրությամբ սահմանված հիմքերով ենթակա չեն պահպանման: Սահմանափակում կիրառելու ~~եւ~~և դրանք դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինները սահմանափակումը կիրառելու կամ վերացնելու վերաբերյալ որոշումը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ ~~մասում~~կետում

նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգովներկայացնումկարգով ներկայացնում են անշարժ գույքի պետական ռեգիստր:

7.) Սահմանափակում կիրառելու ևև դրանք դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինները, սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով, յուրաքանչյուր եռամսյակ իրենց կատարած աշխատանքների ևև խմբագրումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն են ներկայացնում անշարժ գույքի պետական ռեգիստրին, որն իրականացնում է ստացված տեղեկատվության հաշվառում՝ դրանում ներառելով նաև նաև իր կատարած աշխատանքների ևև խմբագրումների վերաբերյալ- եռամսյակային տեղեկատվությունը:

8.) Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ մասումկետում սահմանված երկու տարվա ժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը անշարժ գույքի պետական ռեգիստրը, սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով արգելափակում է Ցանկի խմբագրման հնարավորությունը:

9.) Ֆիզիկական ևև իրավաբանական անձինք, ինչպես նաևնաև պետական ևև տեղական ինքնակառավարման մարմինները, սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ մասովկետով սահմանված ժամկետը լրանալու օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում Ցանկի խմբագրման վերաբերյալ իրենց դիմում-բողոքները ներկայացնում են սահմանափակում կիրառելու ևև դրանք դադարեցնելու լիազորություն ունեցող մարմիններ, որոնք Ցանկում գույքի տնօրինման, օգտագործման կամ տիրապետման իրավազորությունների նկատմամբ սահմանափակումներ լրացնելու վերաբերյալ դիմում-բողոքների մասին, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ մասումկետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով հաղորդում են անշարժ գույքի պետական ռեգիստրին:

10~~.~~) Սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ ~~մասում~~կետում նշված հաղորդման հիման վրա անշարժ գույքի պետական ռեգիստրը օրենքի ուժով գրանցում է գույքի~~-~~ տնօրինման, օգտագործման կամ տիրապետման իրավազորությունների սահմանափակում, որն իր իրավաբանական ուժը պահպանում է երկու ամիս, եթե ~~մինչեւ~~մինչև տվյալ ժամկետի լրանալը սահմանափակում կիրառելու կամ դրանք դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինը չի ներկայացրել սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ ~~մասում~~կետում նշված դիմում-բողոքների քննարկման արդյունքում կայացված սահմանափակումը դադարեցնելու կամ սահմանափակում կիրառելու մասին որոշում:

11~~.~~) Սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ ~~մասում~~կետում նշված դիմում-բողոքները քննարկվում ~~եւ~~և լուծվում են օրենսդրությամբ սահմանված կարգով երկամսյա ժամկետում:

Դիմում-բողոքների լուծման արդյունքում կազմված սահմանափակումը դադարեցնելու կամ սահմանափակում կիրառելու մասին որոշումը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ ~~մասում~~կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով ներկայացվում են անշարժ գույքի պետական ռեգիստր:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-519-27.02.2023-ՏՀ-011/0) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-519[1] -27.02.2023-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** |
| «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ | | | | | |
| 1. | **ՀՀ կառավարություն** | **1-ին հոդվածի 1-ին մաս** | Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի կետերի համարակալումն համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերի պահանջներին: | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Նույն դիտարկումը վերաբերելի է նաև նախագծի համանման այլ կարգավորումներին (Նախագծի 4-րդ, 6-րդ, 9-րդ, 10-րդ հոդվածներ): **Նախագծի 4-րդ, 6-րդ, 9-րդ, 10-րդ հոդվածների համարակալումն համապատասխանեցվել են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերի պահանջներին:** | | |
| 2. | **ՀՀ կառավարություն** | **2-րդ հոդված** | 2-րդ հոդվածի 1-ին կետի վերջում դնել միջակետ, իսկ հոդվածի վերջում վերջակետ: **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:** | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | **ՀՀ կառավարություն** | **5-րդ հոդված** | Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքի 26-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին մասը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով և 5-րդ մասի 3-րդ կետով սահմանված պահանջներին:<br>**Հղում է կատարվել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասին:** | Ընդունվել: | Ընդունվել է: |
| 4. | **ՀՀ կառավարություն** | **6-րդ հոդված** | Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին կետում «սույն մասին 1-ին կետի» բառերը փոխարինել «սույն հոդվածի 3.5-րդ մասի» բառերով:<br>**Փոփոխությունը կատարվել է, քանի որ** | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **Նախագծի 6-րդ հոդվածը խմբագրվել է, որի արդյունքում Օրենքի 32-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ և լրացվել է նոր 3.5-րդ մաս:** | | |
| 5. | **ՀՀ կառավարություն** | **9-րդ հոդված** | Հոդվածի վերնագրում «47.1» թիվը փոխարինել «47.1-ին» բառերով, իսկ հոդվածի մասերի համարակալումն համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերի պահանջներին: **Համարակալումը համապատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերի պահանջներին:** | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | **ՀՀ կառավարություն** | **9-րդ հոդված** | Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ կետով Օրենքի 47.1-ին հոդվածում լրացվող նոր մասերի համարակալման մեջ առկա վրիպակը, այն է՝ երկու 8-րդ մասերի առկայությունը ուղղել:<br>**9-րդ հոդվածի 3-րդ կետի կրկնվող 8-րդ կետը դարձել է 9-րդ կետ, կատարվել է համարակալման ուղղում:** | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 7. | **ՀՀ կառավարություն** | **9-րդ հոդված** | **Նախագծի 9-րդ հոդվածի ուղղված 9-րդ կետում** «վերաբերյալ» բառից հետո լրացնել «սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետում» բառերը:<br>**9-րդ կետում հստակեցվել է ավտոմոբիլային ճանապարհի նախագծի վերաբերյալ գրավոր համաձայնություն կամ առաջարկություն ներկայացնելու ժամկետ:** | **Ընդունվել է:** | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8. | **ՀՀ կառավարություն** | **9-րդ հոդվածի 3-րդ կետի 11-րդ մաս** | **Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ կետի 11-րդ մասում** «2.1» թիվը փոխարինել «2.1-ին» բառերով:<br>**Կատարվել է ուղղում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանման նպատակով:** | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 9. | **ՀՀ կառավարություն** | **10-րդ հոդված** | Նախագծի 10-րդ հոդվածի վերնագիրը հանել:<br>**«Նորմատիվ իրավական ակտերի մասին« օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների համաձայն:** | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 10. | **ՀՀ կառավարություն** | **10-րդ հոդվածի 2-րդ մաս** | Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասում «1-ին հոդվածի 3-րդ մասում» բառերն փոխարինել «1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում» բառերով, իսկ «1» թիվը փոխարինել «մեկ» բառով:<br>**«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի** | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **21-րդ հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:** | | |
| 11. | **ՀՀ կառավարություն** | **10-րդ հոդվածի 3-րդ մաս** | Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասում «2-րդ մասում» բառերը փոխարինել «2-րդ կետում» բառերով: Նույն մասում «1-ին հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինել «1-ին մասի 2-րդ կետով» բառերով: **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:** | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 12. | **ՀՀ կառավարություն** | **10-րդ հոդվածի 4-րդ մաս** | Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասում «3-րդ մասում» բառերը փոխարինել «1-ին մասի 3-րդ կետում» բառերով, իսկ «պահից» բառից հետո լրացնել «, նույն որոշմամբ սահմանված կարգով,» բառերը: | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Ինչպես նաև նախագծով սահմանվում է նշված գործառույթների իրականացման վերաբերյալ կարգ սահմանելու լիազորություն:** | | |
| 13. | **ՀՀ կառավարություն** | **10-րդ հոդվածի 5-րդ մաս** | Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մասում «ռեգիստրը» բառից հետո լրացնել «, սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով» բառերը: **Նախագծով սահմանվում է նշված գործառույթների իրականացման վերաբերյալ կարգ սահմանելու լիազորություն:** | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 14. | **ՀՀ կառավարություն** | **10-րդ հոդվածի 6-րդ մաս** | Նախագծի 10-րդ հոդվածի 6-րդ մասում «հետո,» բառից հետո լրացնել «սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով,» բառերը: Նույն մասում «3-րդ մասում» բառերը փոխարինել «1-ին մասի 3-րդ կետում» բառերով: **Նախագծով սահմանվում է նշված գործառույթների իրականացման վերաբերյալ կարգ սահմանելու լիազորություն:** | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 15. | **ՀՀ կառավարություն** | **10-րդ հոդվածի 7-րդ մաս** | Նախագծի 10-րդ հոդվածի 7-րդ մասում «մարմինները» բառից հետո լրացնել «, սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կարգով,» բառերը: **Նախագծով սահմանվում է նշված գործառույթների իրականացման վերաբերյալ կարգ սահմանելու լիազորություն:** | | |
| 16. | **ՀՀ կառավարություն** | **10-րդ հոդվածի 8-րդ մաս** | Նախագծի 10-րդ հոդվածի 8-րդ մասում «6-րդ մասում» բառերը փոխարինել «1-ին մասի 6-րդ կետում» բառերով, նույն մասում «ռեգիստրը» բառից հետո լրացնել «սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված Կառավարության որոշմամբ սահմանված կարգով» բառերը: **Նախագծով սահմանվում է նշված գործառույթների իրականացման վերաբերյալ կարգ սահմանելու լիազորություն:** | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 17. | **ՀՀ կառավարություն** | **10-րդ** | Նախագծի 10-րդ հոդվածի 9-րդ մասում «սույն | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **հոդվածի 9-րդ մաս** | հոդվածի 8-րդ մասով» բառերը փոխարինել «սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով» բառերով, իսկ «սույն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասում» բառերը փոխարինել «սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում» բառերով: **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:** | | |
| 18. | **ՀՀ կառավարություն** | **10-րդ հոդվածի 10-րդ մաս** | Նախագծի 10-րդ հոդվածի 10-րդ մասում «9-րդ մասում» բառերը փոխարինել «1-ին մասի 9-րդ կետում» բառերով: **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:** | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 19. | **ՀՀ կառավարություն** | **10-րդ հոդվածի 11-րդ մաս** | Նախագծի 10-րդ հոդվածի 11-րդ մասում «9-րդ մասում» բառերը փոխարինել «9-րդ կետում» բառերով, նույն մասում «սույն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասում» բառերը փոխարինել «սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում» բառերով: **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:** | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ | | | | | |
| 1. | **ՀՀ կառավարություն** | **1-ին հոդված** | «Հայաստանի Հանրապետության» բառերը լրացնել «հոկտեմբերի 4-ի» բառերից հետո: **«Նորմատիվ իրավական ակտերի մասին« օրենքի** | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **21-րդ հոդվածի պահանջների համապատասխանեցում:** | | |
| 2. | **ՀՀ կառավարություն** | **2-րդ հոդված** | Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրը հանել: **«Նորմատիվ իրավական ակտերի մասին« օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների համաձայն:** | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 3. | **ՀՀ կառավարություն** | **2-րդ հոդվածի 2-րդ մաս** | «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծն ուժի մեջ է մտնում դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու պահից, որն էլ իր հերթին ընդունվում է նախագծի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Նշենք, որ սահմանված ժամկետով անհնար է առաջնորդվել, հետեւաբար | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | առաջարկում ենք սահմանել ավելի հստակ ժամկետ: | | |